



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1697

Ն ՄԱՏԵՐԱՐ ԲԻՇ 7

N. 7
L OF GOOD HEALTH

ՔԱԶԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

ԱԿԵՏԱՐԱՆԸ

ԳՐԵՑ

Զ. Ա. ՊՐՈՊԻՆ



Կ. ՊՈԼԻ. Խ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԲԷՈՍԵԱՆ

1921

225

F-90

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱՅԱՐ թիվ 7

No. 7

THE GOSPEL OF GOOD HEALTH

225

F- 90

ՔԱԶԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

ԱՐԵՏԱՐԱՆԸ

ԳՐԵՑ

Զ. Ռ. ՊՐԱՋԻՆ



Հրատարակության Ամերիկեան Պորտ Ընկերութեան

Կ. ՊՈԼԻՍ

ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԲԷՈՒԵԱՆ

1921

2010



ՎԵՐԱԺԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱՅԱՐԻ ԱՌԹԻՒ

Բարիին տինող Զեռքը, որ Նախախնամուրեան ամենազօր Զեռքն իսկ է, անսկրպբնական դարերէ ի վեր գործած է եւ պիտի գործէ յաւիտեան։ Հակառակ աշխարհս ու ազգերը յեղացըող, վերիվայրող փոփոխութիւններու։ Եոյն այս տինող Զեռքը, երբեմն երեւութապէս դանդաղ, երբեմն անհասկնալիօրէն բարդ, բայց տեսականապէս կ'իրագործէ Անհուն Միջին Մեծ Ծրագիրը։

Վերջացող համաշխարհային անաւոր պատերազմը, որմէ անցաւ աշխարհն՝ իրեւ կրակէ, իր սահմուկեցուցիչ ու անբացատրելի յեղացըումներուն մեզն իսկ, կը հաւատանք թէ, մասն եւ այն Մեծ Ծրագիրին։ Այս մեծ աղեսին պատճառաւ աշխարհին մեջ յառաջ եկան մեծ աւերներ, զորոնք վերաշինելու համար գերազոյն նիզեր բափելու ժաշան մըն է որ կը բացուի մեր առջեւ։ Մեծ է նիւթական ու տնտեսական կորուսն ու աւերը. բայց մարդիկ սկսած են անմիջապէս խորհիլ անոնց վե-



39267 - 67

52560 - Ա. Հ.

րաշինութեան ու դարմանումին համար : Բայց մեծագոյն կորուսը, զոր աշխարհ քրաւ այս մեծ աղետին առքիւ, ոչ նիւրականն էր, ոչ ալ ՏԵՏԵՍԱԿԱՅԻՐ : Բարոյական ու հոգիւոր աշխարհի կորուսներն ու աւերեները ժիրօնէն անշափելի ու մեծապէս աւաղելի են : Դաս հոգիներ մահացան, շատ նկարագիրներ բայխալուեցան, շատ բարոյականներ խարարեցան, շատ հաւատքներ խախտեցան ու Բարիին տինող Ձեռքին սփանչելի շատ մը ձեռակերտներ փնացան առ յաւես :

Բայց հիմա ժամ է զործելու ամեն անոնց, որոնք Յաւիտենական Միակ Բարիին, ամենաբարին Աստուծոյ, բարձրացնող զօրութեամբ զօտեպնդուած՝ պիտի սկսին վերաշինութեան սուրբ զործին՝ հոգիներու աշխարհին մեջ : Վերջին դժբախս փորձառութեամբ ա'լ աւելի գիտակցեցանք քէ շատ դիւրին և խանդիլը, նոյն ատեն արդէն գիտէինք քէ շատ ու շատ դժուար էր տինելն ու մանաւանդ վերաշինելը : Բայց այդ պատճառ մը չէ որ չվերսկսինք տինութեան նույիրական զործին, որուն կամաւոր ու համոզուած զործիները բլլալ բարձր առանձնաւորհումն է իւրաքանչիւր Քիյսոնեայի :

Հետեւաբար, մեեն եւս, հոգեւին գիտակից այդ սուրբ զործին կենսական կարեւորութեան ու անյետաձգելի պահանջին՝ բարոյական եւ հոգեւոր վերաշինութեան սատարած ըլլալու միակ բաղձանենով կը հրատարակենք ներկայ Վերաշինութեան Մատենաշարը, որ՝ կը յուսանք քէ Աստուծոյ Աբ. Հոգիին Շնորհիովը անկործանելի վերաշինութիւն յառաջ պիտի բերէ բնրեցողներու հոգիներուն մեջ :



ՔԱԶԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԸ

«Եւ ինձի կենաց զուրի գետ մը ցուցուց ակնվանիի պէս պայծառ, որ կ'եղիք Աստուծոյ ու Գառնուկին արռուեն : Եւ այս բաղադրին հրապարակին մեջ, ու այն գետին մէկ կողմէն ու միւս կողմէն կենաց ծառ կար՝ որ տասուերկու կերպ պտուղ կը բերէր, ու ամեն ամիս իր պտուղը կու տար . Եւ այն ծառին Տերեները հեթանոսներուն բժեկութիւն կ'ըլլար :» Յայս. ԱԲ. 1,2 :

Տեսանողին տեսլեան մէջ «Ճառին տերեւները հեթանոսներուն բժշկութիւն» էին : Անոր մտքով, պտուղէն աւելի տերեւները չնորհալի խորհրդանշիւր եղան հիւանդութիւն բժշկելու Աստուածային հոգածութեան : Տերեւները կը ներկայացնեն ինչ որ գիպուածական է, տեսակ մը երկրորդական արտադրութիւն : Ծառին զլխաւոր պաշտօնն է պտուղ բերել, «Ամէն ամիս պտուղ կու տար, ամէն տեսակ պտուղ,» և անտարակոյս այն տեսակէն զոր տապքեալը կը միշէ, ըսելով, «Հոգիին պտուղը այս է . սէր, Խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատար-

մութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն։» Բարոյական այս օգտակար յատկութիւններն են չողիին պտուղները։ Նկարագրի այս տեսակն է իրական պտուղը, զոր կենաց ծառը կոչուած է տալ մարդկային փորձառութեան պարտէզին մէջ։ Սակայն զլխաւոր իր այս կոչման հետ կարծես դիպուածաբար ունի նաև քաջառողջութեան ծառայելու պաշտօն մը — «Ճառին տերեւները հեթանոսներուն բժըշկութիւն» կ'ըլլային։

Կ'ուզեմ այժմէն որոշ պարզել այս կէտը, վասն զի բոլոր մէր համայնքներուն մէջ կրօնասէրներու խումբեր կան, որոնք Փիղիքական բուժումը իրենց ուշագրութեան զլխաւոր առարկան կը դարձնեն։ Անոր վրայ կը խօսին, անոր վրայ կը խորհին, անոր վրայ կը զրեն անդադար։ Իրենց հրատարակութիւններուն մէջ ախտին գոյութիւնն իսկ կ'ուրանան, բայց հետաքրքրաշարժ անհետեղողականութեամբ մը կը փութան անդոյ այդ ախտը, առանց ուեէ դեղի, բուժելու հերոսական ձեռնարկին յատկացնել իրենց զլխաւոր ոյժը։ Ասով իրենց կրօնական հորիզոնն իրապէս կը սահմանափակին և տերեւի արտադրութեան միայն կը նուիրուին։ Երբ դատաստանի օրը գայ, վախ կայ որ անոնցմէ շատեր «տերեւներէ զատ բան մը» չունենան ցուցնելու, կորստական այս մարմինները լաւ վիճակի մէջ պահելու իրենց կարողութիւնն ապացուցանելու աենդին պատճառով արհամարհած ըլլալով օգտակար և անձնուրաց ծառայութեան աւելի կարեսր բաները։ Այս ուրիշ բան չէ, բայց եթէ չափազանց կարեւորութիւն ընծայել և կեղրնական կամ զլխաւոր հանգամանք տալ դիպուածականին։

Ամէն պարագայի մէջ գիղիքական այս մարմինները պիտի թողունք քիչ ժամանակէն։ Հետեւապէս մեծ խնդիրն այն չէ թէ մէկը լաւ լեարդ և առողջ ստամոքս ունի թէ ոչ, այլ թէ ողջամիտ և ծմարիտ մա՞րդ է, ուղիղ, անձնուրաց և օգտակա՞ր է իր անձնական բնաւորութեամբ։ Ֆիղիքական բուժումն իրենց զլխաւոր նպատակն ընող մարդոց այս խումբերը կրնան ցոյց տալ այսինչ տեսակէն բաւական թուով բուժումներ։ Իրենք տերեւի արտադրութեամբ կ'զբաղին և տարօրինակ բան պիտի ըլլար, եթէ երբեմն տերեւի բաւական գոհացուցիչ հունձք չարտադրէին։ Սակայն երբ փնտուք թէ իրենց ընդհանուր բերքը ի՞նչ է օգտակար ծառայութեան պտուղի ձևով, երբ հարցնէք թէ քանի՞ պատսպարան ունին որբերու և ծերերու համար, աղքատներու համար ի՞նչ կ'ընեն իմաստութեամբ մատակարարուող և առատաձեռնութեամբ հոգացուող նպաստի հաստատութիւններու միջոցով, ո՞րքան բարի աղջեցութիւններ կը գործածեն մեր քաղաքներու անխմամ և բազմուկարօտ թաղերուն վրայ՝ ընկերային ընտիր գաղութներ և բարեկարգչական ուրիշ ձեռնարկներ հաստատելով անոնց մէջ, երկու սեռէ ալ զարգացած քանի՞ Քրիստոնեաներ կը հասցնեն ամէն բարի գործի համար կատարելապէս պատրաստուած, շատ ըսելիք չունին իրենց ինպաստ։ Դժբախտաբար զբաղած են զլխաւորապէս այս տերեւներն արտադրելով, որոնք մարմնաւոր կարգ մը եկրորդական տկարութիւններ կը բուժեն։

Անոնց յաջողութիւնները զրեթէ ամբողջովին, եթէ ոչ բոլորովին, կը կայանան գործարաններու

զործողութեան յատուկ խանդարումներու և ոչ թէ կազմական հիւանդութեան, այսինքն ախտաւոր գործարաններու, բուժման մէջ։ Շատեր զիտեմ որ զլացաւէ, անմարսողութենէ և նմանօրինակ ուրիշ անկարգութիւնէ ազատեցան մտային դարմանումով։ Զեմ զիտեր սակայն սոսկ նոյն դրութեամբ բուժուած գործարանային հիւանդութեան միակ օրինակ մը, ուր նաև քան դարմանումը ձեռնհաս ախտաճանաչներու ձեռամբ վճռապէս հաստատուած ըլլար ախտին ներկայութիւնը և յետոյ նմանապէս ապացուցուած՝ անոր բուժումը։ Թելազրութեան սկզբունքը միծ կարեորութիւն ունի ջղային կամ մտային անկարգութիւններէ ծագում առնող ախտերու մէջ։ Բայց կը թուի թէ ցարդ չնչին կամ ոչնչ ազդեցութիւն ունեցած է քաղցկեղի, հիւծախտի և երիկամախտի նման դործարանային լուրջ հիւանդութիւններու դէմ։ Անշուշտ տղայոց և ընդհանրապէս անուսներու ապահովութեան համար լաւ պիտի ըլլար որ մտաբոյմները օրէնքով կամ հանրային կարծիքին ճնշումով ստիպուէին իրենց աշխատութիւնն յատկացնել հիւանդութեան այնպիսի դէպքերու միայն, ուր գիտական հետազոտութիւն ու լայն փորձառութիւն միամնաբար ցոյց կու տան թէ թելազրութեամբ դարմանում կարելի է յաջողելու բաւական յուսով։

Սակայն Աւետարանի զլխաւոր նպատակին կեղրոնական ու զիգուածական մասերուն այս տարբերութիւնը ցուցնելէ եաւ կ'ուզեմ հարցնել թէ հոս Սուրբ Գիրքը մեզի ի՞նչ կը ներկայացնէ մեր առողջութեան համար։ Յիսուս Քրիստոսի եկեղեցին առողջութիւն սորվեցնելու է մեզի ոչ թէ իբր

իր զլխաւոր պաշտօնը, այլ իբր տերեն իր զլխաւոր նպատակի ծառին, որ, ինչպէս արդէն իսկ ցուցուեցաւ, պիտի տայ Քրիստոնէական նկարագրի և ծառայութեան բարի պտուղը։ Թերեւս անտեղի կերպով ահաբեկած ենք կրօնական փորձառութեան այս երկողին յաճախ յատկանչող անիմաստ և տարափոխիկ խանդավառութենէն։ Զանց ըրած ենք ինչ որ լաւ պիտի ըլլար որ համբերութեամբ մշակած ըլլայինք խելքով ու սիրով։ Այսօր կրօնական այնքան երկրորդական ներկայացումներ պիտի չունենայինք, եթէ զլխաւոր վրանին տակ կատարուած խաղարկութիւնն աւելի ինամեալ, գոհացուցիչ ու կատարեալ ըլլար։ Կարող ըլլալու էինք բոլոր եկողներուն տալ Աստուծոյ Որդւոյն աւետարանին ամբողջական օգտակարութիւնը։

Ինձի այնպէս թուած է թէ տասնեւիններորդ դարու վերջին կիսուն մէջ լայնատարած հակում մը կար արտաքինին չափազանց կարեորութիւն ընծայելու, իսկ ներքինին ոչ բաւական։ Յառաջդիմութեան աստղը դարերով գէպ արևմուտք շարժեցաւ, նիւթական զարգացման նոր դաշտեր փընտելով։ Հիմա, ինչպէս ըստ մէկն անցեալ օր, գէպ ի ներս կը շարժի։ Նիւթական բաներու վրայ հաստատուած գրեթէ կուսպաշտական հաւատաքը առողջարար հականարուած մը ունեցաւ և անտեսանելի զօրութիւններու նկատմամբ շահագրգռութիւն սկսաւ։ Այսեր ու կիներ դարձեալ սկսան մշակել, պատուել ու պաշտել ներքինը, և շատ կերպերով կը յայտնուի այս տրամադրութիւնը։ Այս աշխարհի թագաւորութիւնները, մարմնական առողջութիւն, մտային դարգացում, ըն-

կերային հրապոյր , օգտակար գործունէութիւն , այս ներքին շարժման միջոցով սկսած են աւելի ճշմարտավէս ու կանոնաւորապէս ըլլալ թագաւորութիւններ Քրիստոսի Հոգւոյն — ոչ ևս ապստամբ , ոչ ևս առանձին ու անկախ , այլ հնազանդ ու համերաշխ թագաւորութիւններ Աստուծոյ Հոգւոյն :

Ես կը հաւատամ թէ լաւագոյն առողջութեան և հետեապէս լայնագոյն ինդութեան ու արդիւնաւորութեան համար մեր Քրիստոնեայ աշխարհին գլխաւոր յոյսը չկայանար այնչափ բժշկական գիտութեան առաւելագոյն յաջողութեամբ դարմանելուն մէջ անձի մը վրայ իրապէս եկած ուէ հիւանդութիւն , որքան ալ ինքնին կարևոր գործ ըլլայ այս , որչափ ներքին կեանքն այնպէս զօրացնելու մէջ որ աւելի զերծ մնայ հիւանդութեան յարձակումներէն :

Ահա ոսկեհանք մը ոչ թէ հեռակայ լեռներու մէջ , այլ ձեր խոկ անձնական կեանքին խորերը թաղուած : Երբեք պատշաճապէս պեղուած չէ այն : Դուք միշտ ձեզի հետ ունիք ձեր միտքն ու հոգին , և միշտ շվման մէջ են անոնք ձեր բոլոր անդամներուն հետ : Անդուն համակրական և կենսական յարաբերութիւններու մէջ են գործարանային բոլոր այն պաշտօններուն հետ , որոնցմէ կախում ունինք առողջ կեանք վայելելու համար : Անտեսանելի այդ զօրութիւնները կարելի է լուսաւոր հաւատքով և իմաստուն կամքով այնպէս օգտագործել որ անխորհրդութեան և անտարբերութեան հողին տակ թերեւ տարիներէ հետէ թաղուած սքանչելի հարսաւութիւններ ձեռք բերէք : Կրնաք , եթէ կ'ուղէք , պեղել ու երևան հանել

ձեր ներսի ճոխութիւնը , և այսպէս անզին շահարաժմիններ շահիլ ձեզի և ձեր սիրելիներուն համար :

Ցոյց տանք ուրեմն Սուրբ Գրոց մէջ ծանուցուած քաջառողջութեան այս տւետարանին կարգ մը կէտերը :

Նախ , ուղիղ խորհուրդներ իրեւ ընդհանուր սովորութիւն մտային կեանքի — «Մեկը իր սրբի մեջ ինչպէս կը մտածէ , այնպէս է :» Այս չնշանակեր թէ միակ խորհուրդ մը քաղցկեղ կը բուժէ կամ ցաւող ակուայ մը կը լեցնէ — Սուրբ Գիրքը գրող մարդիկը խենթ չէին : Այլ կը նշանակէ թէ մտքի վիճակները միշտ կ'արձանագրուին իրենց յաջորդող ֆիզիքական վիճակներուն մէջ : Մտքի ախտաւոր պայմանները տակաւ յառաջ կը բերեն մարմնի ախտաւոր պայմաններ : Տկարութիւն , անհաստատամտութիւն և երկիւղ՝ գետին մը կը պատրաստեն ախտի սերմերուն բոլորովին նպաստաւոր : Միւս կողմէ մտքի առողջ վիճակներ — ամէն չարութենէ , դառնութենէ , նախանձէ զերծ միտքեր , հաւատքով , յուսով ու սիրով լեցուն միտքեր — առողջութեան կը նպաստեն արևալոյսի , թարմ օդի և մաքուր ջուրի նման : Մարդ մը իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ անդուլ անդադար , դէպի վեր թէ դէպի վար , այնպէս կը միտի ըլլալ :

Շատ աւելի դժուար է ուղիղ խորհուրդներ , ուղիղ բաղձանքներ , ուղիղ նպաստակներ մշակել այնպէս որ միշտ մեր մէջ իշխեն անոնք , քան երթալ բան մը առնել շիշի մը մէջէն : Մարդկային փորձառութեան իրական բարձունքները կարելի չէ ելլել առանց մաքանելու և մագլցելու : Բայց «Քաջառողջութիւն , շիշ մէկ տողար» աղաղակն սկսած

է արագ արագ կորսնցնել իր հրապոյրը : » Եւ այժմու ուշադրաւ աղաղակն է քաջառողջութիւն տպահովել Աստուծոյ յայտնեալ կամքին հետ երջանիկ ներդաշնակութեամբ ֆիզիքական , մտային և հոգեոր ամէն կարողութիւններ մշակելով և զարգացընելով :

Դարմանումի այս մեթոծը սա առաւելութիւնն ալ ունի որ կը բովանդակէ , և իսկապէս ու տևականապէս աղղեցիկ ըլլալու համար պէտք է որ բովանդակէ , ամբողջ ներքին կեանքին մշակումն ու զարգացումը , ինչ որ անկարելի է շիշի մը մէջէն բան մը առնելով : Շատերս պիտի ապրինք ու տեսնենք այն օրը , երբ ամէն կողմ՝ կենաց այս ծառերը պիտի ածին հեթանոսներու կամ աղղերու բժշկութիւն եղող տերեւներով ծածկուած : Եւ հասարակ ժողովուրդը , ուրախութեամբ լոելով բարի լուրը , օգնութեան այս աղրիւրէն անդադար պիտի օգտուի իր առողջութիւնը բարւոքելու համար : Զանացէք այն կէտն հասնիլ , ուր կրնաք վեր նայիլ և ըսել , «Բու խորհուրդներդ իմ խորհուրդներս են , և քու ճամբաներդ իմ ճամբաներս , ով Ֆէր , » և ահա այնչափ յառաջացած պիտի ըլլաք որ պիտի կրնաք ըմբռնել սա բարձր խորհուրդը , «Մէկը իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ , այնպէս է : »

Մեր մտքի խաղաղութիւնը եղծող և այսպէս ախտի այս ինչ տեսակներուն մերձեցումն հրաւիրող երկիւղի զիխաւոր տեսակներն են վատառողջութեան երկիւղ , ձախորդութեան երկիւղ , զրկումի երկիւղ և պարտականութեան կատարման մէջ անյաջողութեան երկիւղ : Ուրիշ երկիւղներ ալ կրնան ըլլալ , բայց անկարեւոր են այս չորս զիխաւորնե-

րուն հետ բաղդատմամբ : Եւ նեղիչ բոլոր երկիւղներուն առջեւն կ'երթայ ֆիզիքական անտառակութեան այս ահաւոր երկիւղը :

Կարելի չէ թեթև կերպով նկատել զայն : Զենք կը նար ձեռքի շարժումով մը կամ մտքի խարեպատիր պատկերով մը ի բաց վանել զայն : Երկիւղալի բանը գոյութիւն չունի՝ ըսողները պարզապէս թեթևամիտ են : Տկարութիւն և ցաւ , հիւանդութիւն և մահ , բիրտ իրականութիւններ են , և պէտք է դիմագրաւել և , որչափ կարելի է , նուածել զանոնք : Կենսական հարցն է թէ ի՞նչ արամադրութեամբ կարելի է լաւագոյնս դիմագրաւել զանոնք երբ գան :

Ես չեմ գիտեր տրամադրութիւն մը լաւագոյն քան զայն , որով Սաղմոսերգուն կ'երգէր , «Զարէն պիտի չվախնամ , վասն զի գուն ինծի հետ ես : » Գործնական ձեր բոլոր իմաստութեամբ միջոցներ յարմարցուցէք նպատակներու : Օգնութեան ամէն կարելի աղրիւրէ օգտուեցէք հիւանդութիւն , վիշտ , ձախորդութիւն և անյաջողութիւն խափանելու և դարմանելու համար : Սակայն երբ օգնութեան ամէն տեսակնելի տեսակներ պատրաստ ըլլան , զիտցէք թէ ձեր յաղթանակի հաւանականութիւնն յանչափս պիտի աւելնայ , եթէ համարձակ ու աներկիւղ պայքարիք , այդ երգին ոգւսվ վառուած և զայն ձեր ներքին կեանքը վարող խորհուրդներուն մէջ ամփոփած :

Պիտի չվախնամ : Ամէն առաւօտ որ կ'արթնաք դժնդակ օր մը սկսելու համար , մտային թելազրութեան քաջածանօթ սկզբունքն օգտագործեցէք՝ միտքը զիտմամբ ուղիղ խորհուրդներով լե-

ցընելով։ Սկսէք ձեր օրը Սուրբ Գրոց կարգ մը խոստումներ կրկնելով և բերնով, մտքով ու հոգւով զանոնք յեղիղելով, մինչև որ անոնց ամբողջ զօրութիւնն զգացուի ձեր էութեան մին մի բջիջն մէջ։ «Զարէն պիտի չվախնամ, վասն զի դուն ինծի հետ ես։» «Ձեր զօրութիւնը հանդարտութեամբ ու ապաւինութեամբ կ'ըլլայ։» «Հանդարտ կեցէք ու ճանչցէք որ ես եմ Աստուած։» «Զօրաց Տէրը մեղի հետ է, Յակոբի Աստուածը մեր ապաւէնն է։» «Մի վախնար, միայն թէ հաւատա — ամէն բան կարելի է անոր որ կը հաւատայ։» «Գիտեմ թէ որո՞ւ եմ հաւատացեր, և համոզուած եմ որ իմ իրեն աւանդած բանս կրնայ պահել մինչև այն օրը։» «Որ կը քաւէ բոլոր անօրէնութիւններդ, ու կը բժշկէ քու բոլոր հիւանդութիւններդ։ որ կը փրկէ քու կեանքրի ապականութենէ, որ կը լեցնէ քու ծերութիւնդ բարութիւնով, ու քու մանկութիւնդ արծիւին պէս կը նորոգուի։» Սկսէք օրն այս խոստումներով որ թնդան ձեր ականջներուն մէջ, երգեն ձեր մտքին գաղտ խորչերուն մէջ և ուժգին արոփին ձեր սրախն շարժումներուն մէջ։ Գիշերը երբ կը թուլցնէք ձեր յոփնած մկաններն ու խօնջած ուղեղը, որպէս զի քննանաք, կրկնեցէք այս նոյն խոստումները որպէս զի ստանաք ձեր վերջնական պարտուպատշաճ արամազրութիւնը և կրէք անոնց առողջարար ու խաղաղարար ազդեցութիւնը քունի բոլոր ժամերուն մէջ։

Անկարող եմ ձեզի ամբողջովին բացատրել օգուան այս խրատին, եթէ հետեւիք ասոր։ Բայց կրնամ շատ բան յայտնել, իմ տեղեկագիրս երկար փորձառութեան արդիւնք է և քաղուած բազմա-

զրաղ ու կորովի կեանքէ մը, ուր տեսանելի և անտեսանելի ամէն օգնութիւններ հարկ եղան և փորձուելով ապացուցին այն բարձր արժանիքը որոնց վրայ այժմ կը ծանրանամ։ Աստուածային այս խոստումներուն վրայ լրջութեամբ, հաստատամութեամբ և հաւատագով խորհրդածելու ունակութիւնը, միանգամ կազմուելէ ետև, հրաշալիք կը գործէ։ Երբեմնի երկչու ու յուսահատ հոգիներ կ'առաջնորդուին ըսել, «Այսպիսի բան մը ամենաված չենք։» Ասողութեան, մտային կարողութեան և նկարագրի վրայ այս ունակութեան ճշմարիտ արդիւնքները, ի սկզբան փափուկ ու անշմարելի թուելով հանդերձ, հետզհետէ կ'արձանագրուին ներքին կեանքին վրայ մինչև որ աւելի լայն ու աւելի հիմնաւոր ազգուութեամբ կը յայտնուին ամբողջ կեանքի գործերուն համար։ Այս է ինչ որ Սաղմոսերդուն ըսաւ։ Կատարելապէս տեղեկակ էր ան թէ կեանքն ամբողջ կանանց արօտ և հանդարտ ջուր պիտի չըլլար, թէ պիտի ստիպուէր շուքի ձորերու մէջ քալել։ սակայն, ինչ ալ պատահէր, պիտի չվախնար բնաւ։ Այն մարդը որուներսի հոգին այսպիսի խորհուրդներով լցցուած ու գրաւուած է՝ հիւանդութեան յարձակումներու դէմ զօրեղապէս ամրացած կ'զգայ ինքինք։

Երկրորդ, բարձր ակնկալութիւններ իբր հիմնական ընտրութիւն ձեր խորագոյն և լաւագոյն եսին — «Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի։» Սուրբ Գրոց լեզուն գրեթէ միշտ մեծ ակնկալութիւններու լեզուն է, միակ պայմանն ըլլալով մարդոց ընդունելու պատրաստականութիւնը։ «Լայն բաց քու բերանդ, և զանիկա ես պիտի լեցնեմ» — նիւթ


չպակսիր Տէրոջը քով : «Ասով զիս փորձեցէք , կ'ըսէ զօրաց Տէրը , ձեր նուբրումը կատարեալ ըրէք , և տեսէք թէ արդեօք ձեզի երկնից պատուհանները չեմ բանար ու ձեզի օրհնութիւն թափեր , այնպէս որ անոր բաւական տեղ ըլլայ : » «Եիտուկ կայնեցէք , ձեզունը բարձր է»— ձեր գլուխն անոր չէք զարներ : Ձեր հաւատքին , ձեր պատրաստութեան , յօժարութեան , տարողութեան պէս ըլլայ ձեզի : Անստոյդ կամ անիրական հանգամանք չունի այս—մարդիկ մեծ մասամբ կ'ըլլան ինչ որ կը յուսան ըլլալ այն թաքուն հաւատքով , որ միշտ ի յայտ չգար պաշտօնական դաւանանքի մէջ , այլ՝ կեանքը կառավարող յարատե տենչերը ձեակերպելու մէջ : Ձեր ակնկալութեան ամուր գրկին մէջ առէք այս Փիզիքական բնութիւնը , ջերմապէս ամենաբարին հայցելով անոր համար , և ահա ձեր հաւատքին պէս պիտի ըլլայ ձեզի :

Այն մարդիկը որ շարունակ կ'ակնկալէն վարակուիլ ընթացիկ ամէն հիւանդութիւններէ՝ քիչ անգամ կը խաբուին , ընդհանրապէս կը վարակուին ամէնէն : Անոնք որ միշտ անուղողի և երկիւղի մէջ կ'ապրին՝ գրեթէ միշտ կը տեսնեն իրենց յոռեգոյն երկիւղներուն ոչ թէ ամբողջութեան , չափազանցութիւն պիտի ըլլար այդ անշուշտ , այլ կարեոր մէկ մասին իրականացումը : Տակաւ առ տակաւ իրենց ակնկալութեան համեմատ կ'ըլլայ իրենց՝ իրական փորձառութեան մէջ :

Միւս կողմէ , ուշիմ բժշկին , կիրթ հիւանդապահին , հաւասարակշռեալ մաքի տէր հասարակ մահկանացուին հանդարտ , անվլրդով վսաանութիւնը պողպատեայ զրահի պէս է հիւանդութեան

ամէն յարձակումներու դէմ , մինչ իւրաքանչիւրն արիաբար իր գործին կը պարապի : Իրենց հաւատքին պէս կ'ըլլայ իրենց , և արդիւնքը ահազին տարբերութիւն ունի : Եթէ ամէն ոք ունակութիւն ստանար հոս հոն երթալու՝ իդ . Սաղմոսի սա ընտանի խօսքերը — «Զարէն պիտի չվախնամ , վասն զի Դուն ինծի հետ ես : Զարէն պիտի չվախնամ , վասն զի Դուն ինծի հետ ես» — կրկնելով բերնով և մտքին ու սրտին մէջ խոր զրոշմելով , չեմ ըսեր թէ պիտի կրնար բոժոժաւոր օձերու քով պառկի կամ ճախճախուափ տենդաբեր ջուր խմել առանց վնասուելու , այլ թէ քաջառողջ ապրելու իր հաւատականութիւնը մերթ երեսուն անգամ աւելի պիտի ըլլար , մերթ վաթսուն և մերթ հարիւր : Բարձր , բարձր ակնկալութիւն անուցէք , ամենալաւին սպասեցէք , ամենալաւին յուսացէք , ամենալաւին ձգտեցէք , և ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի :

Երբորդ , անխախտ հաստատամտութիւն իբրև անդրդուելի դիրք ձեր կամքին — «ով կին , ով հաւատքի մեծ է , ով ուզածիդ պէս ըլլայ ինզի :» Ահաւասիկ մայր մը , որու գուսաթը կը տառապէր ջղային այն ախտերէն միով — այժմու բառով լուսնուառութեամբ — որոնք ցայսօր ի դերև կը հանեն յանախ մեր լաւագոյն բժիշկներուն ճարտարութիւնը : Գիտական ախտաճանաչութեան անտեղեակ այն ժամանակի մարդոց , մինչ կը տեսնէին աղջկան տանջանքն ու գելումները , կը թուէր թէ «գեէն սաստիկ կը չարչարուէր» ան : Լաւագոյն մեկնութիւնը զոր կրնային տուր այդ վիճակին՝ սա էր թէ աղջկան նորութեակուղ թշնամի չար ոգի մը կը չարչարէր խեղճ աղջիկը :



Կինը Երբայեցի չէր, Քանանսացի էր: Բայց համարձակ եկաւ Քրիստոսի և ըսաւ, «Որդի Դաւթի, ողորմէ ինծի, ողորմէ զաւկիս:» Ոչ միայն հեթանոս էր, այլ և աղմկարար ու անպատկառ: Աշակերտներն ըսին, «Սրճակէ ատիկա:» բայց ան ա'լ աւելի եռանդով կ'աղաղակէր Քրիստոսի, Այն ատեն Յիսուս մեղմով ըսաւ անոր, «Ես ուրիշի մը չըրկուեցայ, բայց միայն Խրայէի կորսուած ոչ խարներուն:» Սակայն կինը չընկրկեցաւ. նորէն եկաւ ու աղաղակեց, «Տէր, օգնէ ինծի:» Յիսուս, աւելի փորձելու համար անոր հաստատամութիւնը, ըսաւ, «Աղէկ չէ տղոց հացը առնել ու շուներուն ձգել:» Իսկ կինը պատասխանեց, «Այո, Տէր, վասն զի շուներն ալ իրենց տէրոջ սեղանէն ինկած փշրանքներէն կը կերակրուին — փշ՛ւր մը տուր ինծի Աստուածային օդնութենէն:» Անոր հաստատամութիւնը ցատկեց անցաւ ցեղի և հեռաւորութեան ամէն պատուաբներէն, երկարատև ու ցաւագին հիւանդութեան մը բոլոր խոչընդուներէն: Եւ Յիսուս պատասխանեց. «Ով կին, քու հաւատքդ մեծ է, քու ուզածիդ պիս ըլլայ քեզի:» Հաստատ կամքով յայտնուող հաւատքը յաղթանակ տարաւ «և նոյն ժամէն անոր աղջիկը բժշշկուեցաւ:»

Եթէ, ձեր միտքն ու հոգին Աստուծոյ հետ հաշտ և, որչափ կրնաք, լիովին ուղիղ յարաբերութեան մէջ պահելով ելլէք և ըսէք Աստուծոյ անունով, «Առողջութիւն ըլլայ,» և անյողողդ կամքով, վստահութեամբ և յուսով կրկնէք ու յեղյեղէք զայս, ձեր ներքին կեանքին այս գործողութիւնն իսկ հրաշք կը գործէ: Զեմ ըսեր թէ ոչ մէկ հի-

ւանդութիւն կրնայ զիմաղրել ձեզի, վասն զի ամենակարող չէք, այլ կ'ըսեմ թէ աշխարհի բուժիչ մեծ ոյժերէն մին շարժման մէջ կը դնէք:

Մեր շուրջ ամէն կողմ մարդիկ կան որ դադրած են իրենց տկարութիւններուն վրայ խօսելէ, խորհելէ և իրենց անձերուն վրայ խղճալէ, և կ'ըսեն վկրոյիշեալ կերպով, «Առողջութիւն ըլլայ,» և առողջութիւն կ'ըլլայ: Վերջապէս իրենց ուզածին պէս կ'ըլլայ իրենց: Երբ մարդիկ իրենց աչքը բարձր, ազնիւ, օգտաւէտ բանի մը վրայ յառեն՝ իրենց հաստատ կամքը Աստուծոյ նպատակին հետ լծորդելով և արիաբար ու անդադար ըսեն, կ'ուզենք, կ'ուզենք, կ'ուզենք, կը դնեն իրենքիրենք զիրքի մը մէջ, ուր աւելի յաղթական կը հանդիսան՝ մեզ սիրողին ձեռամբ:

Ինչ որ այս մասին կը քարոզեմ՝ ջանացած եմ անձամբ գործադրել, և կ'զգամ թէ բաւական փորձառութեամբ խօսելու իրաւունք շահած եմ: Երբեք եղած չեմ մին անոնցմէ, որոնց համար կ'ըսէ իրն Մաքլարըն թէ այնքան վայրագօրէն ու չարաչար առողջ են որ բնաւ ճշմարիտ կարենցութիւն չունին իրենց կեանքերն իսկ աղատելու համար կուռողներու հանդէպ:» Ես երբ ծնայ, զօրաւոր մանկիկ մը չէի, և շատ տարիներ ֆիղիքապէս տառապեցայ, և գեռ կը տառապիմ քանի մը տկարութենէ: Սակայն իրը քսան տարի առաջ սորվեցայ աւելի լաւ կուռիլ, և քանի մը նոր զէնք ստացայ: Ակսայ գործադրել տարբեր դրութիւն մը, որով շարք մը յաղթանակներ շահեցայ: Հիմա եկեղեցւոյ մը գործոն հովիւն եմ աւելի քան տասնեւինը տարիէ ի վեր, որոնց միջոցին ընաւ ժամադրութիւն մը չկորուսի հիւանդութեան պատճառով:

Այս ձմեռ տասնեւութ տարի եղաւ այն օրէն ի վեր, երբ առաջին անգամ լսեցի կրիփ կոչուած հիւանդութեան վրայ, որ այն ժամանակ համա- ճարակի հանգամանք առած էր: Եթէ կարենայի յիշել ամէն ինչ որ այդ հիւանդութեան վրայ կը պատմուէր տառապողներու կողմէ, վստահ եմ թէ պիտի կրնայի անոր բնական պատմութիւնը գրել՝ կարգաւ բոլոր ախտանիշերը տալով և բոլոր դժբախտ հետեւանքները թուելով: Այս անվերջ նկարագրութիւններն օգտակար չէին անոնց որ ցաւազին մանրամասնութիւնները կը պատմէին: Երբեք իմաստութիւն չէ աննպատակ խօսիլ, և եթէ մէկն իր նեղութիւններուն վրայ որոշ ու օգտակար տեսակէտով մը չխօսիր իր բժշկին, հիւանդապահին, հովուին կամ ընտանիքի մէկ անդամին, լաւ է որ բնաւ չխօսի անոնց վրայ:

Սակայն այնքան վարակուածներ ոյցելած և այնքան խօսքեր լսած ըլլալով հանդերձ ես երբեք չիւանդացայ կրիբով, երբեք ալ չեմ սպասեր հիւանդանալ: Անկեղծ հաղանդութիւն առողջութեան Աստուածադիր օրէնքներուն որ Տասնորան- եայ Պատուիրանին չափ նուիրական են, ուղիղ խորհուրդներ սնուցանելու սովորութիւն, անդորր հաւատք և հաստատամտութեան քիչ մը կարողութիւն, մինչև ցարդ բաւական եղան զիս պահպանել այս մասնաւոր հիւանդութեան յարձակումներէն: Հաստատ որոշեցէք թէ առողջ պիտի ըլլաք, երե- կոյին այդ գաղափարով անկողին մտէք և այդ գա- ղափարով ելէք առաւօտուն, ձեր հետ կրեցէք զայն, ինչպէս կը կրէք ձեր դէմքն ու ձեռքերը — և ահա պիտի գտնէք թէ ձեր ուղածին պէս կ'ըլ- լայ ձեզի:

Վերջապէս հաւատք ունեցէք Աստուծոյ վրայ իբրև մեր կեանքերուն զերագոյն Բարեկամին ու Օգնականին վրայ: «Աստուծոյ հաւատք ունեցէք,» ըստ Յիսուս իր դողդղացող աշակերտներուն, և թէև զանոնք առանց քսակի և պարկի զրկեց, այս նոր ու բարձր հաւատքին մէջ ուր հաստատած էր զիրենք՝ գտան անոնք անձնական կազդուրման տեական ազբիւր մը և հանրօգուտ ծառայութեան առատ միջոցներ:

Սրեկեան քաղաքի մը մէջ հիւանդանոց մը կայ, որու քովէն կ'անցնէի ես շատ անգամ, և ամէն անգամ կը խրախուսուէի միմիայն վեր նա- յելով: Հիւանդանոցն աղիւսակերտ է. սակայն ճակատն ունի կծեայ լայն տախտակ մը, որու վրայ ոսկի տառերով գրուած են սա պարզ բառերը. «Ո.ՍՏՈՒԾՈՅ ՀԱԼԱՏԱՑԷՔ:» Քրիստոնէի հիւան- դանոց է, ինչպէս կը հասկնաք: Պատգարակներով կամ սիրելիներու օգնութեամբ հոն բերուող հա- րիւրաւոր տառապեալներ այդ բառերուն նայած են դռնէն ներս մանելու պահուն: Վստահ եմ թէ այդ բառերը նոր արիութիւն տուած են բազմաթիւ անձկոտ սիրտերու: Հարիւրաւոր տառապեալներ բուժուած են հոն մարդկային խելքի և մարդկային սիրոյ գործակցութեամբն այն բուժիչ ոյժերուն հետ, որոնք բոլորովին Աստուածային են: Վերստացուած առողջութեան վրայ ուրախանալով մեխնելու պա- հուն թերես գարձեալ նայած են այն ոսկետառ բառերուն և աւելի խորապէս չնորհակալ եղած՝ Աս- տուծմէ, որ իր ընտրեալ զաւակներուն հետ գոր- ծած էր իրենց առողջացման համար: Աստուծոյ հաւատացէք: Լաւ խօսք է այս՝ բժշկութեան

Նորիրուած հաստատութեան մը ճակատը կամ անհատական բնակարանի մը պատերուն վրայ քանդակուելու և կամ մարդկային սրտի վրայ խորապէս դրոշմուելու համար։ Յաւիտեան մատնացոյց կ'ընէ անսպառ օգնութեան ստոյգ աղբիւր մը։

Յաճախ վախցած ենք արիաբար հետապնդել վաղեմի Քրիստոնէութեան այն պարզ, ինքնափառ ու հոգեւոր զօրութիւնը, որ առաքեալներուն օրով հիւանդները կը բուժէր և միեւնոյն ժամանակ հոգին մեղքէ կը փրկէր։ Սակայն օգտակար պիտի ըլլար զայն որոնել կամ հետապնդել, եթէ նոյն իսկ վորձէինք ու չյաջողէինք գտնել։ Բայց շատեր կարդ մը մոլեռանդներու կոյր առաջնորդութեամբ սա համոզման եկած են թէ, եթէ փորձնն իրապէս ապաւինիլ սա հաւատքին թէ Աստուած կարող է ուղղակի բժշկել, այդ իսկ փորձով նիւթական ունէ դարման գործածելու ամէն իրաւոնք կը կորացնեն։ Ահաւասիկ զուտ զրախօսութիւն մը։ Ամենակայն այնքան զիւրագգած չէ որ իր հոգեւոր օգնութիւնը զլանայ, որովհետև հիւանդը կը գործածէ նաև նիւթական դարման մը, զոր ինք յատկապէս իր զաւակներուն պէտքին համար ստեղծեց։ Այդ նեղմիտ մարդիկն իրաւոնք չունին կարծելու թէ Աստուած ալ իրենց պէս է։

Բայց կ'ըսուի մեղի վճռական շեշտով մը թէ ընսւ յիշատակութիւն չկայ որ Յիսուս երբեք գեղ գործածեց։ Այո, չկայ։ Յիշատակութիւն չկայ նաև թէ Յիսուս երբեք վերելակ կամ հեռաձայն գործածեց։ Սակայն յիմար պիտի ըլլայ մարդ մը, որ այսօր յամառի սանդուխներէն վեր ոտքով ելլել բարձր չէնքի մը մինչեւ գագաթը, կամ քալելով երթալ

կատարել իր բոլոր գործերը, ըսելով թէ Յիսուս բնաւ վերելակ կամ հեռաձայն չգործածեց։ Երբեմն գեղ մը զոր Աստուած ստեղծած և մարդիկ սորված են գործածել՝ արդիւնք մը կու տայ աւելի դիւրաւ ու աւելի արագ քան զոր կարելի է ստանալ (եթէ երբեք կարելի է ստանալ) զուտ մտային ու հոգեւոր ոյժերով։ Յիմար է արդարեւ այն մարդը, որ թեթևութեամբ կը մերժէ այդպիսի դեղ մը։

Դարձեալ, այն մարդիկը որ խստիւ կը պախարակին գեղերու գործածումը հիւանդութեան ժամանակ, ամէնն ալ օճառ կը գործածեն։ Արդ, օճառը գեղ է, գեղի մթերանոցներու մէջ կը ծախուի և քիմիական աղղեցութիւն ունի։ Եթէ մարդ մը առատ առաք չուր և բաւական ժամանակ ունենայ, կրնոյ իր ձեռքերը, երեսը և հագուստը լուալ մաքրել առանց օճառի։ Բայց այս աւելի արագ ու դիւրաւ կը կատարուի օճառով։ Ուստի ամէն ողջամիտ մարդիկ կը գործածեն այս գեղը զոր օճառ կը կոչենք։ Անոնք իսկ որ հիւանդութիւն բուժելու համար զեղի գործածութեան դէմ կը զայրանան՝ օճառ կը գործածեն առանց ըստ երեսութիւն զգալու թէ ո՛րքան ծիծաղելի կ'ընեն իրենքիրենք այս անհետևողականութեամբ։

Աստուծոյ հաւատացէք ուրեմն առանց վախնակու թէ ձեր հաւատքը կ'անպատուէք բոլոր այն օգտակար միջոցները գործածելով, զորս ինք ստեղծած է մեր օգտին համար։ Աստուծոյ հաւատացէք, և օգտագործեցէք ամբողջ այն օգնութիւնը զոր կրնաք Անտեսանելիէն ստանալ ձեր կատարեալ բուժման համար։

Ֆիզիքական բաներու մէջ մեղի օգնելու Աստ-

ուածային յօժարութիւնը մեր երևակսյածէն շատ աւելի է։ Ինչ ինչ մարզերու մէջ յանդուգն ու խիզ զախ այն հնդապրութիւնները կ'ըլլան, որոնք միշտ լուրջ հետազօտութեան և ստուգելի զիտութեան նախաքայլերն են և յաճախ կը խրաչեցնեն զգոյշ ու լրջախոն միտքերը։ Բայց առաջ աստղապիտութիւն չեղաւ, այլ աստղահնայութիւն, վասն զի աստղերուն մարդոց ագդած ահը, զարմանքը և հետաքրքրութիւնը ամէն տեսակ երևակայութիւններու ծնունդ տուին։ Ասոր տակաւ առ տախաւ յաջորդեց ծզգիտ զիտութիւն մը, որ հիմա կը քարտիսագրէ մողորակներուն շրջանները, կը չափէ աստղերուն իրարմէ և մեզմէ հեռաւորութիւնները, կը կըէ անոնց ահազին զանգուածը և իր լուսապատկերային տարրալուծումով կը բնորոշէ անոնց նոյն իսկ վառելանիւթը։ Առաջ աարրագիտութիւն չեղաւ, այլ՝ ալքիմիա, որու յամառ ջանքն էր ստորին մետաղները թանկագին ոսկիի փոխարկել և ամէն տեսակ կախարդութիւն ընել։ Այս պատրաստեց ճամբան այն ծզգիտ զիտութեան, որ այսօր ամրող ժողովուրդներ երախտապարտ կ'ընէ՝ կարևոր արդիւնքներ յառաջ քերելով տարազագործութեան և երկրագործութեան, հիւանդութիւններու դարմանման, նաև ժողովրդին առողջութիւնը պահպանող առողջապահական տնօրինութիւններու մէջ։

Նմանապէս «Քրիստոնէական Գիտութիւն», «Ճշմարտութեան Տուն», կամ «Նոր Խորհուրդ» կոչուած շարժումներն արդի կեանքի աստղահնայութիւնը և ալքիմիան են և աշխարհի ուշադրութիւնը կը դարձնեն այնպիսի կողմ մը, ուր օգտա-

կար հետազօտութեամբ ի մօտոյ ի լոյս պիտի հանուին այնպիսի բաներ որոնց վրայ գաղափար խոկչունինք։ Պէտք չէ որ խարուխնք կամ խրտչինք յայտնուած յանդուգն կարծիքներէն կամ խիզախ յաւախութիւններէն։ Պէտք չէ որ արհամարհնք մեր զգայարանները, կամ ընենք այնպիսի յայտարարութիւններ որ ճշմարիտ չէին ի սկզբան, ճշմարիտ չեն այժմ և ճշմարիտ պիտի չըլլան յաւիտեան։ Պէտք է որ ցորենը յարդէն զատենք և ապացանենք համբերատար, ուշիմ և համակրալից աշխատութեան աղէկ հողի վրայ, ուր մարմնական կորով պիտի արտադրէ մերթ մէկի տեղ երեսուն, մերթ վաթսուն և մերթ հարիւր։

Պէտք է որ մտաւոր ու հոգեսոր միջոցներով արամազրելի ամէն օդնութիւն գտնենք ու օգտագործենք կատարեալ առողջութիւն ստանալու և պահպանելու համար։ Եւ այս ձեռնարկին մէջ պէտք է որ զգանք թէ Ան որ ժամանակաւ Փալիկեայի Ծովուն եղըը կենալով վհատած նաւորդներու, համակրալից ու վստահ շեշտերով, իրենց Փիզիքական պէտքերուն վրայ խօսեցաւ, զեռ մեղի հետ է և մեր կողմն է յաւիտեան։ «Ճղաք, առողջութիւն ունիք», «կը գոչէ անոր ձայնն այս ժամուն։ «Ճեր յոյսը, հաւատքը և կամքի զօրութիւնը աջ կողմը ձգեցէք ու պիտի զտնէք»։ Եւ երբ այդ կողմը գտնուած տրամադրելի օդնութեան բոլանգակ չափն իմանանք, առաքեալին պէս պիտի ըսենք նորոգ ու խորին երախտագիտութեամբ, «Անիկա Տէրն է»։

Ցաւալի սխալ մը պիտի զործէք, եթէ անտեսէք ծովագիր կեցող համակրալից այդ էակը, որ ճեզ կը

գիտէ մինչ զիշերները մինչև լոյս և ցերեկները մինչ
և իրիկուն կը պայքարիք դուք մարդկային արք-
նութեան ծովուն վրայ, կամ կը մաքառիք սոսկալի
հիւանդութեան մը յարձակումներուն դէմ, յաճախ
ոչինչ ճաշակելով, Խորհրդի, զգացման, բարո-
յական գործի և մարմնական առողջութեան ար-
ժանավայել մակարդակէն շատ վար պիտի ասլրիք,
եթէ անտեսէք անոր օգնութեան առաջարկը: Երբ
սա հարցումը գայ, «Ճղաք, կը գտնէք ձեր սրտի
խորագոյն բաղձանքներուն կատարումը», ապիտի
ստիպուիք «Ոչ» պատասխանել: Ուրեմն զայն
փնտոեցէք ամէն ծոլափի վրայ: Անոր համակրա-
լից ձայնին մտիկ ըլքէք: Անոր պատուէրին համե-
մատ ձգեցէք ձեր աշխատութեան ուռկանը, վասն
զի այս ժամուն իսկ, երբ հանրութեան միտքը
տենչի և աշխատութեան այս ուղղութեան կը հե-
տեի, Աստուած կը բերէ մեղի նոր հաւասարիք մը
թէ ինք գիտէ բոլոր այս պէտքերը և յօժար է մեղի
օգնել մեր բարձրագոյն յոյսերը պատկելու համար:

Կատարեալ առողջութիւն ստանալու և պահ-
պանելու համար մտային ու հոգեոր այս օժանդակ-
ները գործածելու ձեռնարկին մէջ երեք չենք
կրնար դատին օգտակար ըլլալ ուէ կեղծիքով կամ
խարէութեամբ: Տեսած եմ ես լաւ կերակրուած,
լաւ հագուած մարդիկ, որ գունաւոր ապակիով
զարդարուն պատռհաններու ետին հանդստաէտ
բաղմոցներու վրայ նստած և, իրենց ողջմառութեան
վկայութեան դէմ, անիրականին իրականութեան
հաւասալու յամառ փորձերէն մտովի մոլորած,
կ'ըսեն թէ ամեղք, հիւանդութիւն, ախտ, աղքա-
տութիւն և մահ իրականութիւն չեն: Ամէն ինչ

բարի է և ամէն ինչ Աստուած է: Աշխարհի մէջ
ամէն բան սիրուն է բոլորովին, և մենք նմա-
նապէս:»

Շատ ինայազդիտական տեսութիւն է այս: Եթէ
աղքատութիւն, հիւանդութիւն չկայ, հարկաւ
պիտի չհրաւիրուինք ուէ դրամ տալ տուն, հիւան-
դանց, նպաստամատոյց ընկերութիւններ կամ
բարեգործական ընկերակցութիւններ պահելու հա-
մար: Բայց ճշմարիտ չէ, սուտ յայտարարութիւն է
այս, որ չփոթած ու դատել չգիտցող տամնեակ-
ներով անձերու վարել կու տայ ինքնահաճ, ինքնա-
կեղրոն, ինքնագոն կեանք մը, շղակայ ակներե
կարօտութիւններուն բարյապէս անտարբեր Մելքն
իրողութիւն է: Քան տարեկանէ վար պատանիներ
կազի խողովակի կտորներով մարդու գանկ կը ջախ-
ջախին գողութեան համար: Ոճիրն իրողու-
թիւն է: Մարդիկ որ երկու ոտքի վրայ ուղիղ
կը կանգնին և որ ամէն ուրիշ նկատումով սակայն
աւելի ստորին են քան չորքոտանիները՝ ոճիրներ
կը գործեն մանկամարդ կիներու պատուին և ա-
նարատութեան դէմ: Աղքատութիւնն իրողութիւն
է, բիրտ, դաժան և յամառ իրողութիւն, անողոք
թնամի՝ իր կրուկին տակ հեծողներու մարմնական,
իմացական ու բարյական բարօրութեան: Զենք
կրնար վանել զայն խոշոր, անխմաստ սպառնալիք-
ներով կամ ուէ տիսմար կեղծիքով թէ անդոյ է
այն: Իրնանք միայն թեթեցնել բարեսիրտ, խե-
լացի և յարատե ծառայութեամբ: Հիւանդութիւն
և մահ յաճախագէպ իրողութիւններ են, որ իրենց
ետեւն վիշտ կը բերեն թէ՛ ցնորական հայեացք-
ներու յարածներու և թէ՛ հինգ զգայարաններու

վկայութեան տակաւին հաւատ ընծայողներու տուները : Զենք կրնար աշխարհի նեղութիւնները ջընջել՝ անոնց անիրականութեան վրայ բարբանջելով : Պէտք է աներկիւղ դիմագրաւել փորձառութեան իրողութիւնները, միանգամայն բանաւոր վստահութիւն ունենալ օգնութեան այն միջոցներուն վրայ որոնք շատ անգամ անտեսուած են անտեսանելի ըլլալով :

Այս քաջարի պարկեցտութեամբ ուրեմն, որ բանէ մը չփախչիր և բան մը չծածկեր, առէք աւետարանի այս դեղերը — ուղիղ խորհուրդներ, բարձր ակնկալութիւններ, անդրդուելի հաստատամտութիւն, հաւատք առ Աստուած — և գործածեցէք առողջական աւելի կատարեալ ու մնայուն վիճակ մը ունենալու համար : Իրար խառնեցէք, լաւ շարժեցէք զանոնք և առատօրէն գործածեցէք : Պէտք չէ որ ինայողաբար չտփէք կաթիլի շիշով կամ թէյի դգալով : Վնասակար ոչնչ կը պարունակեն անոնք : Առատութեամբ առէք, այնչափ որչափ կրնաք : Զեզի օգուտ կ'ընեն և միայն օգուտ :

Թէև բոլորովին առողջարար են անոնք, չեմ ըսկր թէ համայնաբուժ են գոյութիւն ունեցող ամէն ցաւի համար : Այս դեղերուն օգնութեամբ իսկ չենք կարող վանել ամէն ցաւ, հիւանդութիւն ու մահ : Մէկը որու ուղիղ խորհուրդները, բարձր ակնկալութիւնները, անդրդուելի հաստատամտութիւնը և առ Աստուած հաւատքը բոլորովին կը գլէին ամէն ինչ որ կարելի է մեղի երբեք ակնկաւել այս աշխարհի մէջ, առապացեցաւ : «Իր չարչարանքներէն հսաղանդութիւն սորվեցաւ,» կ'ըսէ Սուրբ Գիրքը : Եթէ ուսէ երազայոյզ մարդ ըսէր

անոր առջև թէ մեղք, հիւանդութիւն և մահ իրականութիւն չեն, բոլորովին առողջ մտքի տէր պիտի չնկատէր զոյն : Երբ ամբարիչտ մարդիկ անոր ոտքերն ու ձեռքերը գամեցին և նիզակով անոր կողը խոցեցին, չարչարուեցաւ ու մեռաւ ան :

Նմանապէս, եթէ անգութ արկածի մը ենթարկուիք, կամ եթէ ձեր կարողութենէն վեր գործով, հոգով ու անձկութեամբ ծանրաբեռնիք, պիտի տառապիք դուք և թերես ցաւագին հիւանդութիւն մը պիտի կրէք : Եւ ժամանակ պիտի գայ, երբ ամէնս ալ պիտի տառապինք ու մեռնինք : Ապրելով ներկայ պայմաններու տակ, այսինքն խուռնամբոխ քաղաքներու մէջ ուր մեր ուտեսան ու ջուրը շատ անգամ ախտաբեր են և ուր օգը զոր կը չնչենք փոխանակ առողջութեան ծառայելու հիւանդութիւնն կը նպաստէ երբեմն, հակառակ ամէն զգուշութեան՝ կարգ մը հիւանդութիւններ անխուսափելի են : Նուազեցուցէք անոնց ծաւալը քաղաքային առողջապահութիւնն իմաստուն տնօրինութիւններով և անձնական նախազգուշութեան ամէն կարելի միջոցներով, և գարձեալ բնակչութեան այնինչ մասը երբեմն պիտի հիւանդանայ տարւոյն ընթացքին մէջ :

Եւ նոյն իսկ մեր լաւագոյն բնութիւնը երբեմն առիթ կ'ըլլայ կենսական ոյժի սպառման : Իր զաւակներուն բարեկեցութեան, դաստիարակութեան և ընկերային դիրքին համար հօր մը բոլորանուէր ջանքը և անոնց ապագային համար իր վայելածէն աւելի լաւ պատրաստութիւններ տեսնելու իղձը կը մղեն զինք այնպէս չափազանց աշխատիլ որ ուժապառ կ'ըլլայ : Շատ մայրեր իրենց կենսական ոյժը այնպէս առատօրէն կը վատնեն իրենց

դաւակներուն համար որ վատառողջութենէ աւերտուած կեանք մը կը տանին ընդ քարչ : Եւ շատ ուրիշներ , սիրելիներու պայքարներուն ի տես , այնքան անվերապահօրէն զոհողութիւն կը կրեն որ իրենց կեանքի ոյժերը կը նուազին : Որչափ ալ լուշ արմինք կամ գործնք , տակաւին ձշմարիտ կը մնայ սա իրողութիւնը թէ ստեղծուածներուն մէկ մասը իր կեանքին մէջ երբեմն կը հառաչէ ու փիզիքական ցաւ կը քաշէ :

Բոլոր այս անխուսափելի ցաւերն իրենց վարձքերն ու օգուաներն ալ ունին : Եթէ տեսնող աչք , լսող ականջ և իմացող սիրտ ունէիք , մհծարժէք բան մը քաղեցիք ձեր վերջին տկարութենէն : Բժշկական ծախքի ծանր հաշուեցոյցի մը հետազոյթի սովորական զգացում մը չբերաւ լոկ : Զանցնիր այն առանց ձեզ օրհնելու : Բերաւ ձեզի ինչ որ Սաղմոսերգուն կ'անուանէ ձեր ամբողջ էութեան ընդլայնումը և ճոխացումը , երբ կ'ըսէ , «Նեղութեան մէջ զիս ընդարձակեցիր» :

Երբ կը կոչուիք անկունի ծառայել ամիսներով , կամ տաղտկաի շաբաթներ անցընել հիւանդանոցի մէջ , կամ անքուն մնալ գիշերներով ու լուռ առանձնութեան մէջ լսել ժամերուն դանդաղ զնացքը , կրնաք , եթէ ուզէք , մտքի և սրտի բարձր յատկութիւններու փոխարկել այս ամէնը : Կրնաք հասնիլ այն կէտը , ուր ձեր համակրական զգացումները կ'երթան , որպէս երբեք չէին զացած ցարդ , գէպի ի համբերութեամբ տառապողներու ամբողջ բանակը : Կրնաք սորվիլ նորոգ գորովով մը մտածել անոնց վրայ , որոնք իրենց ցաւերուն մէջ չեն վայելեր այն հանդիսան ու սփոփանքը զոր

դուք ունիք : Կրնաք նոր ոճով մը գնահատել իրենց նեղութիւններուն մէջ իրարու օգնող խեղճերու հաւատարմական և անձնուրացական հերոսութիւնը : Կրնաք նեղութեան այդ շրջանէն այնպէս անցնիլ որ աշխարհի նեղութիւններուն հանդէպ ձեր ամբողջ դիրքովն ընդարձարկուիք դուք :

Երբ յաջող ու երջանիկ ենք և կրնանք օրը երեք անգամ ուտել և զիշերն ութ ժամ քնանալ , առաւտուուն սովորական ժամուն հանրուկառք մտնել անխափան՝ մեր գործատեղին երթալու համար և աշխարհի գործին մէջ մեր բաժինն ամբողջովին կատարել և հրճուիլ ատոր համար , կրնանք այնպէս խորհիլ թէ մեր կեանքը պարփակող այս մորմինն անսառիկ բերդ է : Կրնանք կարծրանալ և անզգայանալ այն անձերուն հանդէպ որ ծանր պարագաներու տակ կը պայքարին և երբեմն մէկ երկու ամիս կը կքին ֆիզիքական պարտութիւն կրելով : Եթէ ուսէ անձի սիրտն սկսած է փոքրիանալ , կարծրանալ և անզգայանալ հաճելի փորձառութիւններու շարքով , թերես կարելի չէ որ համակրութիւններով աւելի առատ կեանքի մը առաջնորդուի ուրիշ կերպով , բայց եթէ անձամբ ցափ ու նեղութեան ճամբէն անցնելով : Ուրիշ կերպ ըլլայ թէ չըլլայ , այս է մէկ կերպը : Շատեր այս բոլին կ'անցնին , որպէս զի իրենց մնացեալ օրերուն մէջ քիչ մը կամաց քալեն , բայց համակրական նոր զգացումներով հանդէպ իրենց բոլոր ընկերներուն : Եւ երբ իրենց սրտին կը նային , կ'ըսէն խորին երախտագիտութեամբ , «Նեղութեան մէջ Տէրը զիս ընդարձակեց» :

Բայց , ցուցնելէ ետե ըստ երեսութին անխուսափելի այդ հիւանդութեան պատճառը և բարոյա-

կան աճման նպաստելու այն բարձր պաշտօնը զոր կրնայ ունենալ, դարձեալ կը պնդեմ ուժգնապէս թէ ամէն անհատի համար ոչ միայն պատշաճութեան խնդիր, այլ և բարոյական մեծ պարտականութիւն է բոլոր իր կարելին ընել առողջ, միշտ առողջ և ուրախ ըլլուլու համար։ Մեր Քրիստոնէական պարտականութեան մէկ մասն է այնպէս հնագունդիլ առողջութեան Աստուածային օրէնքներուն, որոնք նոյնչափ նուրիական են որչափ պիտի ըլլային եթէ խսկապէս Սինայէ տրուած ըլլային բարձրածայն, մեր ունակութիւններն այնպէս գասաւորել ամենաբարձր արդիւնաւորութիւն ապահովելու նպատակով, առողջութեան նպաստող նիւթական և հոգեւոր ամէն միջոց այնպէս օգտագործել որ ֆիզիքական առողջութեան բուն չափանիշին հասնինք։


Կ'աղաչնմ ձեզի, ինչպէս երբեմն առաքեալն աղաչեց, որ ձեր մարմիններն ընծայէք կենդանի—ոչ թէ կիսամեռ կամ ախտաւոր, այլ կենդանի—գոհ մը, սուրբ, Աստուծոյ հաճելի, վասն զի այս է ձեր բանաւոր պաշտօնը։ Արկածներ, ժառանգական գրախամառութիւններ և երբեմն անխուսափելի թուող չափազանց աշխատութիւն հաշուէ դուրս թողլով, մարդոց ստուար մեծամասնութեան հնար է ծառայութեան պատրաստ ըլլալ այսպէս տարին երեք հարիւր վաթսունեւհինգ օր։ Եւ այս բարձր առաջադրութեամբ համբայ ելլելու պահուն աննկարսզբելի ոյժ պիտի ստանանք ներքին և հոգեւոր ազդակներէն։ Քաջառողջութեան այս տեսարանին համար անիրական կամ չափազանց պահանջներ չեմ ներկայացներ ես։ Այլ Աս-

տուծոյ Խոսքին և երկարամեայ փորձառութեան ու ընդարձակ դիտողութեան չնորհիւ զիտեմ թէ ուղիղ խորհուրդներ, բարձր ակնկալութիւններ, անդըրդուելի հաստատամտութիւնն և առ Աստուած հաւատք նպաստաւոր են մեր առողջութեան։ Ասնք կենաց ծառի տերեններ են աղգերու բժշկութեան ծառայող։

Ամէնդ ալ դիտեցիք թէ կենաց այս ծառն ո՛ւր էր — «հրապարակին մէջ»։ Կ'աճէր ու կ'ուռածանար իր չնորհաբեր ու գիւրամատչելի ծառայութիւնն ընելով կեղրոնին խոկ մէջ քաղաքին, որու պատերը մեծ ու բարձր են։ Կենաց ծառը հեռու չէր հասարակաց կեսնքէն։ Զէր գտնուեր հեռաւոր պարտէզի մը մէջ միայն, ուր առանձնաշնորհեալներէ զատ ոչ ոք կրնար մտնել։ Զէր փակուած ու պահուած ամենախիստ հակողութեան մը տակ, այնպէս որ միայն սակաւաթիւ ընտրեալներ կրնային մուտ գտնել հոն։ Հրապարակին մէջտեղն էր, ամէնուն արամագրելի, և հասարակաց ամէնօրեայ միջավայրին մաս կը կազմէր։

Պէտք չունինք հեռաւոր սրբավայր մը երթալու, կամ խորհրդաւոր գաղանի աղանդի մը դիմելու, կամ ուրիշներու անիմանալի ծածկախորհուրդ լեզու մը գործածելու, որպէս զի օգտուինք այս օգնութեանէն։ Հոս խոկ, ուր մեր սովորական կիանքի գործը կը կատարենք և մեր հասարակ խելքը կը գործածենք մեր առօրեայ պարտականութիւններուն մէջ, կը գտնենք ահա սքանչելի այս ծառը, որ իր բուժիչ տերեններով կ'աճի կ'ուռածանայ խուռամբոխ հրապարակին մէջտեղը։ Եթէ առնէք այդ տերենները և գործածէք առ հասարակ, պիտի օգտուի

ձեր մարմինը , պիտի օգտուի ձեր հոգին : Արդարեւ
չէք կրնար ամենաբարձր արդիւնաւորութեամբ գոր-
ծածել զանոնք մինչև որ ձեր բարոյական նպա-
տակներն ամբողջովին ուղիղ չըլան : Իրողութիւնն
իսկ թէ Աստուած սուրբ է , թէ Աստուած սէր է՝ կը
պարզէ սա կէտը թէ անսր ամբողջական օգտակա-
րութիւնը հոն միայն տեղի կ'ունենայ , ուր սրբու-
թիւն ու սէր կան : Հետեաբար , ձեր մարմին տկա-
րութիւնները բուժելու համար ծառին տերեւներն
ուղիղ գործածել ջանալու պահուն , պիտի տեսնէք
թէ պիտի տարուիք նաև ուտել ծառին պառլէն ,
որ ձեզի կու տայ կեանք յաւիտենական :



ՎԵՐԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Արդեն իսկ հրատարակուած

	դահ.
Թիւ 1 ԿՆՈԶ ՄԸ ՀԱԻԱՏՔԸ	25
» 2 ՑՆԾՈՒՄԻ ԵՐԿԻՐԸ	15
» 3 ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՀԻՄ	25
» 4 ՎԱՐՃՈՒԹԻՒՆ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ	20
» 5 ԱՃՈՒՄ	25
» 6 ԿԵՍՆՔԻ ԴՊՐՈՅԸ	20
» 7 ՔԱԶԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՍԻԵՏԱՐԱՆԸ	25

Հետզինետէ հրատարակելի

Թիւ 8 Ո՞Վ, Է ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ	
» 9 ՅԻՍՈՒՄ Ի՞ՆՉ ԿՐՍԱՑ ԸՆԵԼ ԶԻՍ	
» 10 ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	
» 11 ՄԵՇ ԸՆԿԵՐԸ	
» 12 ՄԱՐԴՈՒ ՄԸ ՀԱԻԱՏՔԸ	

Գին 25 դահնեկան